ՎԱՀԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
VAHE AVETISYAN

ԱՆՏԻՈՔԻ ԴՔՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ XIII Դ. 50-60-ԱԿԱՆ ԹԹ.

Անտիոքի դքսության պատմության մեջ Բոհեմունդ V-ի իշխանության շրջանն (1233-1251թթ.) ավելի շատ հայտնի է որպես կարևոր իրադարձություններով աչքի չնկնող, Անտիոքի մեկուսացման և լճացման ժամանկաշրջան: Դրան նպաստել են և աղբյուրներում համեմատաբար քիչ տեղեկությունները նրա Անտիոքյան գործունեության մասին, և այն, որ Բոհեմունդը լինելով նաև Տրիպոլիի կոմս՝ իր հիմնական նստավայր ընտրել էր հենց Տրիպոլին: Անտիոքի հյուսիս-արևմտյան հարևան Կիլիկյան թագավորության հետ փոխհարաբերությունները նրա օրոք զարգանում էին ավանդական հակամարտության համատեքստում, բայց դքսի կառավարման վերջում երկու հարևան քրիստոնեական պետությունների միջև երկարատև թշնամությունն ավարտվեց հաշտությամբ, որի նախաձեռնողը հանդիսացավ խաչակրաց արշավանքի ելած Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս IX-ը (1226-1270թթ.): Նա 1248թ. աշնանը և 1249թ. ձմռանը Կիպրոսում եղած ժամանակ ի թիվս Մերձավոր Արևելքի բոլոր քրիստոնեական շրջանների մերձեցման ուղղությամբ արված քայլերի, Նիկոսիայում ընդունեց նաև Անտիոքի դքսի և Հայոց թագավոր Հեթում I-ի (1226-1269թթ.) պատվիրակներին, որոնք եկել էին ողջյունելու Լյուդովիկոսի գալուստը և հայտնելու Սուրբ պատերազմին մասնակցելու իրենց պատրաստակամությունը: Լյուդովիկոսը նրանց հորդորեց վերջ տալ նախկին հակամարտությանը, մշտապես լինել միասին և զենքը ձեռքին պայքարել ընդհանուր թշնամու դեմ և որպես այդ միասնության խորհրդանիշ նա զորաջոկատներ ուղարկեց Անտիոք ու Կիլիկիա[1]:

Վերջիններիս փոխհարաբերությունները որակական նոր փոփոխություններ կրեցին հատկապես Բոհեմունդ V-ի հաջորդ Բոհեմունդ VI-ի (1251-1268թթ.) օրոք: Գահակալման պահին լինելով ընդհամենը 14 տարեկան՝ նրան ոչ միայն

[1] Jauna D., Histoire générale des rayaumes de Chipre, de Jérusqlem, d'Arménie et d'Egypte, Leyde, 1741, p. 592. և Жан де Жуанвиль, Жизнь Людовика Святого, М., 2008, с. 196.

հաջողվեց ազատվել մոր՝ Լյուսիեն դե Կոստիի խնամակալությունից, այլ օգտագործելով նրա մշտապես Տրիպոլիում գտնվելու հանգամանքը, կարողացավ նաև Յաֆֆայում գտնվող Լյուդովիկոս IX-ի աջակցությամբ Անտիոքի կարիքների պատրվակով մորից միջոցներ կորզել: Հնարավոր է, որ հայերն այդ հարցում օժանդակել են երիտասարդ իշխանին՝ ձգտելով ազատվել Անտիոքի իրենց համար անցանկալի տարրերից, հատկապես հունական համայնքի ակտիվացումից, որոնց նույնիսկ հաջողվել էր վերականգնել պատրիարք Եվթիմիոսի աթոռը[2]: Համենայն դեպս, հայերն ուղեկցում էին Բոհեմունդին Յաֆֆայում եղած ժամանակ[3]: Իսկ այն, որ դքսին մտահոգում էր ոչ թե Անտիոքի ճակատագիրն, այլ մոր խնամակալությունից ազատվելը և ֆրանկ տարրի ամրապնդումը, ապացուցում է այն, որ արդեն 1253թ. վերջին և 1254թ. սկզբին նա Տրիպոլիում էր ու շքեղ ընդունելություն էր կազմակերպել Լյուդովիկոսի պատվիրակների համար[4]:

Անտիոքի և Կիլիկիայի ռազմաքաղաքական դաշինքն ամրապնդվեց 1254թ., երբ Բոհեմունդ VI-ն ամուսնացավ Հեթում I-ի դուստր Սիբիլի հետ[5]: Շատ հետազոտողներ նշում են, որ այդ ամուսնությունից հետո Բոհեմունդը որոշ առումով դարձել է Հեթումի վասալը, որ հայերը համաձայնել են կիսել Անտիոքի պաշտպանության պատասխանատվությունը, որ այդուհետ դքսությունն ամբողջությամբ գործել է Կիլիկյան Հայաստանի քաղաքական համակարգում: Որպես ասվածի արտացոլում նշվում են Բոհեմունդի և Հիվանդախնամ միաբանների, նրա դեմ Տրիպոլիում ծագած ապստամբների միջև հաշտեցման գործում Հեթումի միջնորդությունը 1259թ., և մասնավորապես, մոնղոլների հետ դաշինքի մեջ ներքաշման փաստերը[6]:

Սակայն համադրելով աղբյուրների տեղեկություններն, ավելի շատ հիմք ենք ստանում խոսելու խնամիական կապերով և փոխադարձ այցելություններով ամրապնդված ֆրանկո-հայկական կայուն դաշինքի, քան փաստացի վասալության մասին: Նախ, ասպետական միաբանությունների, իտալացի վաճառականների, բյուզանդացիների և խաչակիր իշխանների միջև հաշտեցման պրոցեսը սկսել էր Լյոդովիկոսը IX-ը, որին Արևելքում ընդունում էին

---

[2] Runciman S., A history of the Crusades, v. III, London, 1954, p. 231-233.
[3] Жан де Жуанвиль, Жизнь Людовика Святого, с. 289-290.
[4] Жан де Жуанвиль, Жизнь Людовика Святого, с. 309.
[5] Смбат Спарапет, Летопис, пер. Галстян А., Е., 1974, с. 130-131.
[6] Մասնավորապես Runciman S., A history of the Crusades, v. III, p. 287, Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, Հ-Ա, Ե., 2005, էջ 70-71, Rene Grousset, Histoire des croisades et du royaume Franc de Jerusalem, v. III, P., 1936, p. 515-516.

որպես "համերաշխության հրեշտակ"[7]: Նրա գործուն կողմնակիցն էր նաև Հիվանդախնամների մագիստրոս Վիլյամ Շատոնովացին, որը դեռևս 1256թ. Բոհեմունդի հետ եկել էր նախնական համաձայնության: 1259թ. պայմանագիրը կնքվեց Երուսաղեմի գահաժառանգության համար ծավալված քաղաքացիական պատերազմին վերջ տալու անհրաժեշտության նպատակով ընդհանուր համաձայնության գալու ֆոնի վրա, որին նախորդել էր 1258թ. հոկտեմբերի պայմանագիրն ասպետական միաբանությունների միջև՝ Քրիստոնեական Արևելքում իրենց ազդեցության շրջանների հարցի շուրջ: Ուստի Հեթումի դերն այդ գործում մեղմ ասած չափազանցված է: Իսկ 1259թ-ին Տրիպոլիում Բոհեմունդի դեմ ծագած ապստամբությունը ճնշելու գործում Հեթումի ցույց տված օգնությունը[8] դժվար թե դիտվի որպես "սյուզերենի" պարտավորությունների կատարում, քանի որ նման միջնորդությունը բնավ առաջինը չէր Կիլիկիայի և Անտիոքի պատմության մեջ: Առավել ևս, որ այն ծագել էր Բոհեմունդի մի շատ հավակնոտ ծրագրի արդյունքում, որն արմատապես հերքում է նրա Մերձավոր Արևելքի որևէ իշխանից կախումը և ընդհակառակը, հաստատում տարածաշրջանում առաջնության հասնելու նրա ցանկությունը: Դա բխում է նրանից, որ Բոհեմունդը 1258թ. փետրվարից պայքարում էր Երուսաղեմի և Կիպրոսի թագավորությունների խնամակալ հռչակվելու համար, որի նպատակով Ակրայում գտնվող իր կողմնակիցներին նա տրամադրում էր գումար և զինվորական ուժ[9]: Ինչպես տեսնում ենք և Լյուդովիկոսի, և Հեթումի օգնությունը ոչ թե Բոհեմունդին փրկելու, այլև վերջինիս կողմից իր իշխանատենչական նկրտումներն իրագործելու նպատակ էր հետապնդում:

Գրեթե նույն տեսանկյունից էր Անտիոքի դուքսը նայում նաև Ասորիքում հայտնված մոնղոլներին, որոնց հետ դաշինքի կազմումն ավանդաբար համարվում է Բոհեմունդի վրա Հեթումի ազդեցության հիմնական արտահայտություն: Դեռևս 1246թ.-ից Հեթումը կապեր էր հաստատել մոնղոլների հետ և ճանաչել նրանց գերիշխանությունը, բայց դրանից նա մեծ հաշվով միայն շահել էր՝ ունենալով հզոր դաշնակից մահմեդական հարևանների դեմ: Նա փորձում է այդ հակամահմեդական միության մեջ ներքաշել նաև տարածաշրջանի մյուս քրիստոնեա՝ առաջնորդներին, բայց միայն Անտիոքի դուքսն է գնում այդ քայլին[10] և 1260թ. Հեթումի հետ ներկայանում Անտիոքի սահման-

---

[7] Жозеф Мишо, История крестовых походов, СПБ-М., 1884, с. 254-255.
[8] Смбат Спарапет, Летопис, с. 131.
[9] L'Estoire de Eracles Empereur, Recueil des Histories Croisades (RHC), Histoire Occidentaux, T. II, P., 1859, p. 443.
[10] Ришар Ж., Латино-Иерусалимское королевство, СПБ, 2002, с. 349.

ներին հասած Հուլավուի ճամբար: "Գործք Կիպրացոյցն" այս առնչությամբ նշում է. "Զքնաղ իշխան Բոհեմունդը մեծ ընդունելության արժանացավ հզոր արքա Հուլավուի կողմից, քանի որ իշխանը հայոց արքայի փեսան էր...: Նրանք պետք է միանային թաթարներին և առաջանային Դամասկոս, որը սարացիների ձեռքում էր"[11]: Այս տեղեկությունը հանդիսանում է այն առանցքը, որի հիմման վրա Բոհեմունդի ներքաշումը հակամամլուքյան կոալիցիայի մեջ դիտվում է որպես Անտիոքի վրա Կիլիկիայի քաղաքական ազդեցության հետևանք: Բայց սա ավելի շատ ընդգծում է Հեթումի լավ փոխհարաբերությունները Հուլավուի հետ, քան Բոհեմունդի կախվածությունը նրանից: Բացի դա, Բոհեմունդը դաշինքի դիմաց մոնղոլներից այնպիսի առաջարկներ ստացավ, որ դժվար է պատկերացնել, թե նրա փոխարեն որևէ մեկը կարող էր դրանցից հրաժարվել: Այսպես, Հուլավուն նրան խոստացավ հաջողության դեպքում Անտիոքին վերադարձնել անդորոնտյան բոլոր տարածքները, որոնք մահմեդականների ձեռքում էին[12]: Նման նվաճումներից Բոհեմունդին չէին կարող ետ պահել նույնիսկ Հռոմի պապի կողմից "անհավատների" հետ դաշինքի պատճառով բանադրանքի ենթարկվելու հեռանկարը[13]: Ասվածից հետևում է, որ Բոհեմունդն ամբողջությամբ գործում էր իր հայեցողությամբ՝ ելնելով ստեղծված իրավիճակից, իսկ Հեթումը լավագույն դեպքում կարող էր նրան համոզել ընդհամենն այդ քայլին գնալու նպատակահարմարությունը, բայց ոչ ավելին:

Ստեղծված եռակողմ դաշինքը պահպանվեց մինչև Անտիոքի դքսության կործանումը՝ 1268թ. և ունեցավ բազմաթիվ փոխօգնությունների օրինակներ[14]: Մեծ հաշվով դրանք ավարտվել էին 1266թ.-ին, երբ մամլուքները Մարի ճակատամարտում հայերին ծանր պարտության մատնեցին, ապա շատ չանցած հեշտությամբ գրավեցին Անտիոքը:

---

[11] Les Gestes des Chiprois, RHC, Doc. arméniens, T. II, P., 1906, p. 751.

[12] Պետք է ասել որ նրանք կատարեցին իրենց խոստումը և համատեղ ուժերով Հալեպի ու Դամասկոսի առումից հետո Անտիոքը հետ ստացավ այդ հողերը՝ մասնավորապես Լաթաքիա նավահանգիստը: Տես, Runciman S., A history of the Crusades, v. III, p. 306.

[13] Վրդովված այդ "ամոթալի հպատակությունից", Բեթլեհեմի եպիսկոպոսը բանադրանքի ենթարկեց նրան, հատկապես վիրավորված նրանից, որ Բոհեմունդը Հուլավուի պահանջով Անտիոքում վերականգնել էր հույն պատրիարք Եվթիմիդոսին: Իր հերթին Բոհեմունդը դիմեց պապին և վերջինս, այն բանից հետո, երբ նա Հեթումի օգնությամբ կարողացավ ուժով Եվթիմինդոսին տանել Կիլիկիա և վերականգնել լատին պատրիարքին, 1263թ. մայիսի 26-ին չեղյալ հայտարարեց բանադրանքը: Տես, Ռիպար Ժ., Լատինո-Иерусалимское королевство, с. 350-351.

[14] Մանրամասներ տես Réne Grousset, Histoire des croisades et du royaume Franc de Jérusalem, v. III 611, նաև Микаелян М., История Киликийского Армянского царство, Е., 1952, с. 333-334, 344.

Այսպիսով, խոսելով Անտիոքի դքսության և Կիլիկիան թագավորության փոխհարաբերությունների բնույթի մասին, մենք որևէ լուրջ հիմք չունենք պնդելու, որ Բոհեմունդն ինչ-որ ձևով վասալական կախում ուներ Հեթումից: Մենք կարող ենք խոսել սերտ դաշինքի կամ նույնիսկ միասնական պետության գնացող փոխհարաբերությունների մասին միայն: Այս վերջին ձգտումը պարզ նկատելի է Սմբատ Սպարապետի կողմից "Անտիոքի Ասիզների" հայերեն թարգմանության և Կիլիկիայում գործածության մեջ դնելու ցանկության մեջ: Նա թարգմանությունը սկսել է Մարի ճակատամարտից հետո, որն ըստ Միքայելյանի կարող է կապված լինել ֆեոդալների զինվորական պարտավորությունները խստացնելու հետ[15]: Սակայն, եթե դա պետք է ծառայեր զուտ Կիլիկիայի ներքին խնդիրներին, ապա ինչու՞ էր Սմբատը թարգմանությունից հետո Ասիզների բնագիրը և հայերեն թարգմանությունը մեծ ջանքերի գնով ուղղարկում Անտիոքի "դատարան", որպեսզի այնտեղ համեմատեն և ստորագրություններով հաստատեն, որ դրանք բառ առ բառ համընկնում են իրար, ինչպես նշում է ինքը՝ Սմբատ Սպարապետը[16]: Այս հանգամանքը ստիպում է կարծել, որ և կիլիկյան, և անտիոքյան արքունիքներում հասունացել էր հավասար իրավունքներով միասնական ճակատ կազմելու ձգտումը, որին մասնավորապես նպաստեցին Լյուդովիկոսի գործունեությունն ու նրա անհաջող խաչակրաց արշավանքը, լատին պետությունների ճակատագրի նկատմամբ Արևմուտքում աճող անտարբերությունը և մասնավորապես հարևան մահմեդականների հաղթանակները: Այնպիսի հեռատես քաղաքական գործիչների համար ինչպիսիք էին Հեթումն ու Բոհեմունդը, դժվար չէր հասկանալ, որ ստեղծված իրավիճակում քրիստոնեական տարրը տարածաշրջանում միայն միասնաբար կարելի է փրկել, սակայն այդ վերջին ճիգերն արդեն անզոր էին դա անելու:

---

[15] Микаелян М., История Киликийского Армянского царство с. 284.

[16] Ассизы Антиохийские, пер. Паповяна А., "Բանբեր Մատենադարանի", N 4, Ե., 1958, էջ 335.